

Ձեռք բերուած այս բացառիկ յաջողութիւնը ուղղակի արդիւնք էր հանգուցեալ Հայաստանի լորտին, որ և մանրամասն տեղեկագրած է յետոյ Մեծապատիւ Տիար Արշակ Սափրաստեանի: Սոյն հետաքրքրական նամակին հայերէն թարգմանութիւնը կը ներկայացնենք հոս.

30 Ապրիլ 1924

Սիրելի Տէր

« Ինչ որ կրնայի ըրի տեղ մ'ապահու-
« վելու համար Հայաստանի՝ արտասանուն-
« լիք մասերու ցանկին մէջ, բայց չկրցայ
« փոխել տալ ծրագիրը՝ հաստատուած և
« ընդունուած անցեալ շարքը Ձեր գիտնա-
« նել ուղիքին առաջ: Հասցոյնը զոր կրցայ
« ընել՝ կարգադրութիւնը եղաւ, որով պիտի
« կարդացուի ամփոփոյր մը հետագրի՝ որ
« ամառս 17-ին վիենտիկէն դրկուած էր,
« և և Պ. Պոլտոյին հաւանեցաւ որ հրատա-
« բակուի ան:

« Միայն « Dayly Telegraph »-ը էր
« որ հրատարակեց պատգամը:

« Բարի եղիք իմացնելու ընդհանրական
« Արքային ղեկարարութիւնը՝ որուն հանդիպե-
« ցայ, և յիշու Ս. Ղազարոս վերապա-
« տունայ Հայրերուն հաստատիքն յարգալից
« և երջանիկ յիշատակին այն արտագին
« հիշատարարեան, զոր վայելցի իրենց
« յարկին տակ 1898-ին, երբ բարեպաշտ
« և նշանաւոր գիտունը Հ. Ղեւոնդ Ալիշան՝
« հրատարեց զիս երանաշնորհ Միւրարայ
« Միւրաբանութեան այցելութիւն մը տալու »:

Ա. Մեծ. Տիար Ձերդ անկեղծօրէն
Ա. Սափրաստեան Եղուարդ Ալտրին

Լորտ Եղուարդ Ալտրին նուիրեց յետոյ մեզ իր յարգի լուսանկարը (զոր հոս կը ներկայացնենք)՝ շնորհակալութեան ուրիշ գեղեցիկ նամակի մը հետ. զայս մեզի կը զրկէր պաշտօնապէս Պայընեան լինելու բակցութեան կողմանէ, անգղիացի հոգա-կաւոր Բանաստեղծին հանդէպ՝ Միւրաբանութեան ցոյց տուած մասնաւոր յարգանքի արտայայտութեանց համար:

ԽՄԲ.

ՅՈՒՐ ՀՈԳԵՇՈՒՆՁՐ

Հ. Ղ. ԱԼԻՇԱՆԻ

ԿԵԱՆՔ

[Ի խօսելն զԺամանակէ քնոյ, կերակրոյ, հանգստեան և զբաւանաց՝ ասէ՛] Իկն կենաց ծախեալ և ցնդեալ յանգագաստից ի պահուում միւսոյ կիսոյն. այլ և ի ամին մասին դարձեալ՝ զմեծ մասն ծախելով յոչ ուղղակի աստուածայինս, որպիսի են ուսմունք գիտութեանց՝ թէ և ազնուագոյնք ի պարագմունս արտաքինս:

Սողոմոն ասէր, « Մի մուտ է ամենեցուն յաշխարհ, և մի ելք հասարակաց »: Իցեն մի մուտք, այլ ոչ և մի և նոյն ելք ինձ երեքն.

միօրինակ իցեն ծնունդք, այլ ոչ նոյնօրինակ և մահունք. նոյն իցէ ուստի ելին, ոչ նոյն ուր մտանելոցն են և կալոց. անբանօրէն իմն են մուտք մարդոյ յաշխարհ. այլ ելքն գիտութեամբ, և զանազանեալ ըստ գործոց կենաց իւրաքանչիւր: Յաւիտենականութիւն երկգիծի հանդերձեալ կայ մարդոյ. կամ երանութիւն կամ տառապանք անվախճան. կամ կենք կամ մահ հանապազորդք:

Ոչ ամենայն օր ունի զվազիւ, և ոչ ամենայն գիշեր զտիւ,

Կենսաբան այս խափանիչ լուսադուռնի կենաց:

Յաւաք և աշխատութիւն են երկոքին առանցք՝
զորովք պտուտակեալ հոլովին չուսուական ամբ
կենաց մերոց:

Ի՞նչ կենաց ոք ցանկայ՝ ուսնի զմահ, զի կեց-
ցէ բարուք:

Հոգւոյ՝ չիք սահման ծայրութեան կամ չա-
փու հասակի և լրման. սահման նորա է՝ ան-
սահմանն Եղբրուքն կատարեալ, որպէս և Հայրն
ձեր երկնաւոր կատարեալ է:

Որքան առաւել կենդանի է մարմին՝ այնքան
նուազեալ հոգւոյն կենդանութիւն:

ՄԵՂՔ ԵՒ ՓՈՐՁՈՒԹԻՒՆՔ ԱՊԱՇԵՒԱՐՈՒԹԻՒՆ

Նիւթք՝ հրապոյրք են համբը, կատարիչ ա-
պիրատութեանն՝ հաւանութիւն կամացն է:

Չարս այս (մեղքն) նրբագոյն և ներքստոյն
է քան զամենայն կիրս՝ յալս և ի ծալս սրտի
և հոգւոյ, և ծաւալագոյն քան զամենայն զօ-
րութիւնս նոցին, երազագոյն ի մտանել, յամ-
րագոյն յեւանել, դժուարագոյն ի զգուշանալ
և դրեալմէ անհարկն ամենեւին աղատն լինել:

Յորժամ մթաքք կրից շափառուկ անցեն լու-
սոյ մտաց, անհետանան և ճանապարհք արդա-
րութեան, և այլ ընդ այլ դանդաղէ մարդս:

Ախրս, միւս ևս նիւթիչ հալածանաց անձին.
զօրութիւն ճապուկ դիւրազգած, երկգիւխ միջ-
նորդ ընդ հոգի և ընդ մարմին և յաճախ յետնոյս
դաշնակից, օժանդակ զգայարանաց, սոցա բնա-
բոյս կրից զիջանելով և զհոգւոյն արիւթիւն
խափանելով, և որպէս ի դոյզն լատտափայտի
բարձեալ զնա՝ ի մրկեալ ալիս դեղնելով և
ատատանելով տանջէ. մերթ մուկխառն խան-
դիւ ցնորաբար ձկաեցուցանէ ի սնոտիս և յան-

ձուկս, կամ այլադէմս քան զոր ենն՝ երեւցու-
ցանէ. մերթ ցրտացեալ կարկամեալ կայ անաբ-
ղելի, անպատճառ իմն զդուանօք, կամ ձան՝
ձրութեամբ շիջուցանելով զգեղեցիկ եռանդն՝
որով իրարխուսէ ի գործ:

Այնքան երազ է սիրտ ի գլորել, զի ի վայր-
կենի կարէ և ի խորագոյն խոչկերս թաւալեալ
և ընդ աղբ գալ գռեհաց աշխարհի:

Ձիք արդարեւ յիմարութիւն մեծ քան չգիտել
զմեծութիւն չարեաց՝ և ի նոյն յօժարել:

Երկու իրօք առաւելապէս մեղուցեալ էր
մարդն. յանդուգն հետազոտութեամբ և ան-
վայելուչ հշտախտութեամբ, իբրեւ երկոքումք
մահադէն բազկօք հեղձուցիկ առնելով զեղեմա-
կան խաղաղութիւն արտաքուստ՝ և զհրէշտա-
կայինն ի ներքուստ:

Ի՞նչ յերկար աշխատութիւնն [առ. արտասուս
ապաշխարութեան] խորշեցուցանէ զքեզ, կամ
մանաւանդ կարճութիւն ժամանակի ոչ ներէ
մինչև ի խորս ջրաբուխս իջանել, հար ուժգը-
նութեամբ կամաց զապառաժ սրտիդ, և բոլիես-
ցէ իսկ և իսկ աղբիւրն մաքրաբար և զուար-
թաբար, զի է իսկ արտասուաց և զօրութիւն
հրճուանաց, վասն որոյ և կոչի ի սրբոց հարց
և փորձողաց՝ զգատութիւն և մտաբացութիւն:

Այս հրաշալիք են Աստուծոյ, ջրով կիզուլ
զմեղս, և հրով զովացուցանել զսիրտս: Պար-
զաբար ասասցունք. եթէ ջրու՝ արտասուքն և
զղլու՜մն՝ գեղ է մաքրութեան մեղաց, նոյն և
առաւել ևս հուր սիրոյն, համառօտագեղ քան
զջուրն:

Ապաշխարութիւն՝ զգայ անգործ և քաջալեր,
այլ սէր վայելէ իսկ ի նոյն. նա յուսայ, սա
վստահի. նա՝ ի հանապազորդէն ի ճգունս՝
փափագէ իմն և փութով ի կատարած հասանել,
սա ոչ զգայ զծանրութիւն ճգանց, նա մանա-
ւանդ արդէն իսկ զգայ զի Արքայութիւն Աս-
տուծոյ ի ներքս յինքեան է, և յառնչաւառ-
չեայ նորին վայելէ միամտութեամբ:

[Ջանձնէ] Կարծեցեալ ոսկիս՝ աւաղ անպիտան
դտեալ, ազս՝ անճամեալ, ազաւնիս՝ ազոս-
ւացեալ և ջահս շէջեալ:

Եթէ ոչ ևս կարեմ բարձրագունիցն ժամա-
նէլ դատուց, խառնեցայց աստէն ընդ յետինն,
ընդ Ապաշխարողսն:

Նաւաբեկելոյ յաննկողութենէ՝ միակ փայտ
ապաստանի յալիս ազտեղի ծովուն՝ է Ապաշ-
խարութիւն. իսկ գեղ մեղաց՝ խոտովանու-
թիւնն:

ՄԱՆ ԵՒ ՀԱՆԴԵՐՁԵԱԼՔՆ

Հոգւոյ մեռելոյ յեւս առաջնոյ կենացն՝ չիք
մուտք յանմահութիւն, այլ ի մահ մշտնջե-
նաւոր:

Քանի տազնապ է ժամանել յերկոյ կենաց
և ի գէշեր մահու, և անգիտանալ՝ եթէ զիսդդ
ծագեացէ նմա արշալոյս կենացն հանդերձելոց.
Հայել ի թիկունս՝ ընդ կեանսն անցեալս, և
ափշէլ՝ թէ մրպէս և առ ինչ եկեաց, և որ-
պիսիս արդ երթոյ տալ համարս՝ վասն գործոց
զոր արար, և վասն գործոց՝ զոր առնել էր և
ոչ արար:

Ընդարձակութեան աշխարհիս ելք՝ յանելա-
նելին բանտ:

Որպէս թուռն մի զերծեալ յարգելական
վանդակէն, յետ առաջնոյ շէտակի թուռնացն
զկայ առեալ ի ծառ մի կամ յերդ, կամ թէ
ի մէջն օդոյ ի թիկունս զարձեալ հայելի՝ յոր-
մէ փախեաւն, թուի իմն ինձ այսպէս և հոգւոյ
զերծելոյ ի մարմնոյն նախ դամ մի հայել յայն
յորմէ ելն և ելիք. տեսանել այնպէս անշարժ,
անզօր, տխրոյ զմարմինն զայն՝ յորում տա-
ւապէցաւ այնքան ամս:

Մեռանել՝ անկումն է ի բացարձակ միայնու-
թիւն... Մեռանել՝ ընկճումն և ընդ ցառք
մարմնոյ... Մեռանել՝ մուտք են ի յաւիտե-

նականութիւն. ի յաւիտենականութիւն երջա-
նիկ կամ յաղէտալի:

Այլըր է մահ, ոչ զծագիկ հասակին խարէ և
ոչ զկորով իրանաց:

Մեռաց զի մի մեղաց. զերծեալ ի տեղի՝ ուր
չիք առիթ մեղաց, այլ սիրոյ Աստուծոյ:

Մեռաց առ խոնարհութեան, դառնալով ի
հոգ և ի մոխիր և յալինչ, դարչելի լինելով ի
տեսիլ աշաց, և անտանելի՝ երեսաց երկրի և
մարդկան կենդանեաց:

Ընդ մէջ երկուցն յաւիտենից, երկնից և
գոգոսոց, կացցէ հոգի, մէն միայնակ, անոք
անօգնական. և դատեսցի ամենայն խստութեամբ
արդարութեան:

Հուր [գոգոսոց]՝ առ որով հրդեհէ երկրաւորք՝
ցօղ են զովարար:

Յուպ դաւաղանի օգնութեան [հանգուցեալ
հոգւոյ]՝ խաշն որ ի վերայ լանջացն եղեալ, և
ուղեցոյց ճորգունք երկու տասի և անտի:

Մուտ ի վարժարան մահու, և ուսիր զդաս
կենաց. — որ ի վարժոցի անդ, և ի բեմբի
դադաղին՝ ոչ ուսանիցի զուսումն խոնարհու-
թեան, վայ՛ վայ՛ նմա:

Ուղիղ կանոն կենաց՝ խորհրդածութիւն մա-
հուն է. և խրատատու զգոն լընտրութեան
բարոյ և չարի:

Գառն [Յիսուս] որ արդ անմուռնչ պատա-
րագի՝ մոնչեացէ յաւուր միում՝ ահաւոր ձայ-
նիւ:

Հռչակեսցին տակաւին յաշխարհի և փայլի-
ցեն առ կենցաղասերս, այլ ինքեանք են և եղի-
ցին աստեղք շէջեալք առ երկինս. [Ասէ զայ-

նոցի՛ն՝ որք ոչ յարտեսեցին յաստուածսմբուռութեան՝:

յառաջ քան զայն դադարեցն կամք ի բարւո՛ր բարոյականն կանխէ մահ քան զբնականս:

ԱՐԻՈՒԹԻՒՆ

Վէհերոտութիւն և յուռութիւն, դատերք երկնոյն, առաջին պատճառք և խափանիչք են կատարման կամացն Աստուծոյ ի մեզ. չար ընդաբայն զոր միայն բուռն և յարակիրն շնորհաց հնար է հերքել և Ժրացուցանել զանձն ի վաստակ:

Արիութիւն... անհրաժեշտ իմն արիւն և ոգի է սրտի նուիրականի առ Աստուած:

Ամենայն շինուած մեքենայիւք և գործեզր յօրինի. և պատերազմն զինուք և ուժբոց մզի. մեկնայիւք՝ այլ ոչ ինչ յաշոյղէ կուտելովք զինուք եթէ ոչ ձեռն շարժուն վարեացէ զնոսին:

Հասակ յաղծ և կազմուած գեղեցիկ՝ եթէ ոչ ունիցի և զօրութիւն՝ պատկեր է և անդրի կամ գիւկն պաշտուաճեալ:

Զինուորութիւն և արիութիւն զրեաթէ հասմանիչք են:

Մի ոք չարաչար վշատիցի ընդ ուկարութիւն իւր, զի բազում անգամ ի խորատեղէ հաստաբուռն մայրից և արմատախիւ ևս լինել, գիւրտ շարժ եղեգունէ հոգմակոծեալք կացին մնացին ի կայի իւրեանց:

Հալածանք սեամբ են արգարոց ի մուտս օթեանացն խաղաղութեան:

Համբերութիւն՝ անկակից է ամենայն առաքինութեանց, որք վասն պնդիկ են առաքինութիւնք՝ զի աշխատութեամբ և բազում ճգամբք ստացեալ լինին:

Հետեզայն Ծանապարհի կատարելութեան ճիգն և վաստակ մինչև ի կէտ մահունէ է. եթէ

ՈՒՂՂՈՒԹԻՒՆ ՎԱՐՈՒՅ

Ի նորութեան անդ բնութեան՝ որ շուրջ զինն, առաւել ևս նշմարեմ յիս հնութիւն. և ամենայն դարուն որ զայն նշաւակէ յիս միւս ևս կինէ հնութեան, իբրև վերս և սպիտ հասակի՝ որոյ ոչ գուցէ իսպառ առողջութիւն:

Գոյ և քեզ աստէն նորոգութիւն, ոչ թարշամացեալ մորթոյ, թուլացեալ ջլաց և մաշեալ մարմնոյ, այլ հոգւոյ քուժ, որ է բուն մարդդ, զօրով մարմին՝ որպէս ոստայն մի մնտի անկեալ մածեալ կայ առ Ժամանակ մի:

Ոչ արտաքին ձեռով արգարացիս, այլ ներքին մարդոյդ անաղտ պատմութեանաւ:

Ի ներքս ի քեզ գիտեա և զգա՛ որ ինչ ետք, որ ինչ պարտիս ծանկապիտին քուժ, և որ ինչ կրննիդ և ընկերաց, և որ ինչ աշխարհի՛ յօրինակ զգաստութեան և ուղղութեան:

Զոր օրինակ ըմբռնեալ ուրուք ի բացի յանկարծահաս արաքով ձեան և սառամանեօք, սկսանիցի պաղիւ և բրտանալ, և ոչ ուստեք ունիցի յոյս օգնութեան յամայն վայրին, զինչ ունիցի առնել, բայց եթէ ի նոյն ինքն ի կիսասառօյց անձնէ իւրմէ հոյժհոյժէ հնարս ջերմութեան, երազեալք շարժմամբ և շփմամբ և մարդկով զբովանդակ մարմինն, առանց օտարի ստատարութեան հուր ծնուցանել յինքնէն, կամ յայտնել զԺաջուցեալ կայծակն ընդ սառամբ և միտքով: Սա այսգունակ ի գէպ և արժան է հովացելոյն հոգւով:

Զիք առաքինութիւն անջան և անհակառակ:

«Ոչ եկէ խաղաղութիւն արկանել այլ սուր»... Հզօր է սուր քո, Գրիստոս, այլ հզօրագոյն ևս է սէր քո. և ես ի սէր քո վստահեալ չերկընչիմ ի սրտդ... Սուր քո և խաղաղութիւն՝ միահաւանք են. ի միում գիմի զինուդ՝ կրտրուածն, և ի միւսում՝ կարուածն... սուր քո

արհեալ յերկիր՝ ոչ է հոգեկոտոր՝ այլ հոգե-
կեցոյց:

Տաճար իմն շարժուն գնայուն արասցուք
զմեզ ի մեզ՝ ըստ խորանին վերայութեան:

Եթէ լիցեա բաւական եռանդնոց և զգաստից
հաւասարել, գէթ մի լինիր հասարակորդ ան-
փութայ և պղերգաց, որք ոչ միայն թէ չօգ-
տին՝ այլ և ֆեասապարդդ գտանին, անպա-
տրաստ և անյօժար ի սրբազանն խառնելով:

Հաւատարի և տեղագոյն կնիք որդեգրութեան
ժառանգութիւն է հայրենի ստացուածոյ:

Ուր շատ ներողամտութիւն՝ ժաղաւ և ուղ-
ղութիւն:

Մի հարեանցի ինչ լինիցին առաջագրութիւնք
մեր, որպէս բոց ծխախառն, որ առ վայրկեան
մի չողացեալ խաբէական նշուիւ, իսկոյն շե-
շանի և խաւարի:

Մտադրել և ոչ տիրանալ, ոչ պաշտօնա-
տնարս լինել այլ պաշտօնատար:

Մի բուռն հարցուք զբաղմաց, զի մի յամե-
նայնի թերակատար գտանիցիմք:

ԿՐԾՆԱԴՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՒՅՔ ԿՐԾՆԱԴՈՐԱԿԱՆՔ

Կրօնադոմութեան իսկութիւն է մերկանալ
զկամս անձին և զգենուլ զԱստուծոյն:

Տես, ո՞ւմ զինուորեալդ ես և ո՞րպէս ըն-
թանաս առ կոչն, առ նշանն, առ գիրքինն և
առ գոռարին. զի ոչ է օրէն զինուորի խորել,
այլ այնպէս փութալ կատարել զհրամանն՝ որ-
պէս թէ վասն այնր միայնոյ զինուորեալ էր:
Իայց Քրիստոս առաւել ևս պահանջէ ի մէնջ,
այնքան պատրաստ և փոյթ գնալ գործել, որ-
պէս թէ քաղցեալ որ և ծարաւի ընթանայցէ
առ լուր և առ ոգեպահիկն թռչակ:

Յօժարութիւն ունենդութեան պատրաստե
զսիրտս առ Աստուած:

Ոչ ալիք և ոչ գպրութիւնք՝ այլ խոնարհ
լսելութիւն հասուցանէ զմարդ «ի չափ կա-
տարմանն հասակի Քրիստոսի»:

Հնազանդութեանն հրաման պարզ է և յստակ,
այնպէս պահանջի և կատարումն:

Հնազանդութեան տէք յառաջնորդն տնկեալ
են, ականջք է հպատական:

(Չհնազանդութենէ) Ոգ կրննական, որ և
ըստ նմին տարբեր երկուս յայտնէ. մի տարին՝
խոնարհութիւն մեռուակ, միւսն՝ սեր կենսու-
նակ. և երկուքուք կեայ հոգի:

Կամք՝ ազատութիւն է մարդոյ, և լծակցէն
զնոյն յօժարութեամբ ընդ այլում կամաց՝ ըն-
գարձակութիւն և զօրութիւն ազատութեան:

Առողջ լսելիք հոգեսերք իշխեմ ասել թէ
կանխէն քան զբան և զխօսս Յիսուսի. զի որ
յօժարն է՝ երթայ ի լուր և ի խօսս. հոգի
քրիստոսասէր՝ ի ժամու և ի տարածմու Թաւ-
րայ առ նա, «Իօսեանց տէր, զի լուիցէ ծառայ
քո»- իսկ Յիսուսի մեծարեալ զնա, ոչ ևս ծա-
ռայ կոչեմ զքեզ, ասէ, այլ բարեկամ իմ և
խօսի որպէս բարեկամ ըստ բարեկամի և մեռ-
րիմ ընդ մտերմի: Ով գեղեցիկ համարձակու-
թիւն հայցողին, և ամենազեղեցիկ հաւասարու-
թիւն լսողին և տուողին:

Ոչ է աղքատ հոգեով որ յաղքատանոցի աստ
Յիսուսի հոգայ զընտանեաց և զհարազատաց
ըստ մարմնոյ:

Եթէ սակաւուց է տուեալ պսակն վարդենի,
հասարակաց է հրամայեալ շուշանն մաքրենի,
պէսպէս ծաղկամբ առաքինութեանց, որոց հա-
նապազօրեայ կրթութիւնն մարտիրոսութիւն է
առձեռնապատրաստ:

Առուածին, գեղադէպ և անփոխանակ ծաղիկ լաւութեանց, որ բաւական եղև զԱստուած պաղաքեղ յերկրի... Ողջախոհութեան պատուան անուամբ. և փառաւորեալ յերրեկէ զուգակիցան. հրեշտակակերպ հանդիսանայ պարութեամբ:

Որքան մեղմ է քաղցր է իմաստն սրբութեան սրտի, այնքան է հզոր զօրութեամբ. գերականն ի մարդիկ՝ պատուի սրբութեան առնումբ. այնքան մեծ շնորհ համարեալ է անաղտ անբիծ ծալն յոգի ե ի մարմին. վեհից մտաց զարմանք նուիրին. արի արանց՝ փառք, ոգւոց անարատից՝ ի վերայ այսոցիկ՝ սեր է ճիւղահոգութեան, և անմարմին ի մարմնի ե հրեշտակացեալս համարել:

Սրբութիւն՝ այն ինչ է հոգւոց, որ ինչ մարմնոյս՝ աչքն:

Ոչ է հնար Խրագի Ծանաչել ի գիշին տեղւոյ. և ոչ Դժմարտութեան ի մերկեալ ե ի տղմային սրտի:

Իղձք մարութք է հասակ Դժնաստուն տեսանել իցիւնին ջգուեալ, զծաղուինս բացեալ յերկրի սիրելւոյն. բուրե հոտ այգւոց զոր մշակն երկնային սրբեաց խնամով:

ԽՈՅՆՄԵՐՈՒԹԻՒՆ. — ԼՈՒՈՒԹԻՒՆ

Տուք զարծած տաղանդոյն աւանդելոյ ձեզ՝ ի սեղանաւորս, մինչ կայ զեռ ժամանակ, զի մի յանկարծոյն հասեալ արգարակչիս. տեսանն՝ պարտաւոր գտանիջիք:

Երանի՜ որ կենդանեան պատրաստեի զպետս որ յետ կենդանութեանն, պաշար հանգերձեալ Ծանապարհին ե գին փրկանաց հոգւոյն:

Լոկ պարկեշտութիւն վարուց և զգուշաւորութիւն՝ մեծ վարդապետութիւն է:

Չառն՝ անկ է կրել միշտ, այլ գիտել և զժամանակ ածելոյ և կտրելոյ, և մի պետարսարար վազվազել ի բաց հանել զունկն անլսող:

Լաւ է սակաւ մի ե առ անգամ՝ մի երկըն-

չէլ, քան ի մշտնջնաւոր արհաւիրս անդ տաղանդել անպարծ:

Լաւ է սակաւ մի տոյժ առ ի պահուստ բազմին:

Շնորհք յարատեւութեան մինչև ի վախճան՝ ոչ ոմեք է խոստացեալ, թէպէտ և գերազանցեալ իցէ սրբութեամբ. որպէս զի «աշխւ և զողութեամբ զփրկութիւն անձանց մերոց զործեսցուք»:

Շնորհք յարատեւութեան յաճախ վարձք են կանխադոյն պատրաստութեան ի մահ:

Ի բազմավասնի պահու՝ խոչմութիւն է առաւել ակն ածել ի հզոր ընդիմամարտէն՝ քան ի բարութիւն օգնականին ևեթ յուսադնել:

Չասեմ անփոյթ լինել զառողջութենէ, այլ մի միանգամայն և հիւանդ լինել և բժիշկ և տնտես. ասանդ ասացի ինձամ մարմնոյ, այլ մի մոռացի ե իրատ մարմնոյ:

Լուութիւն՝ ծնող սրբազան խոկմանց:

Լրօնաւորական լուութիւն՝ գրեաթէ հոմանիշ է աստուածախոհութեան և աստուածախօսութեան, զի որ արթուն է և լոկ՝ հարկ է թէ ընդ միտս խօսիցի. լուութիւն ի տան սրբութիւն հորհուրդս աւրբս պահանջի երկնել և ծնանել:

ՍԵՐ. — ՍՐԲՈՒԹԻՒՆ Ե՛՛՛ԼԳԱՅՐՍԻՐՈՒԹԻՒՆ

Առաջին օրէնք են սիրոյ՝ հանապազօրոյնութիւնն. այլք ի գործոց ողորմութեան՝ առ ժառանգակ մի են, սերն՝ անժամանակ, միշտ, անընդհատ, ցորձափ կայ կամ կեայ սիրելին:

Սիրոյ ստացման չիք այլ հնար. սեր ինքն ինքեան է հնար. սեր սիրով հազօրդի և վստի ե բորբոքի. այլ, եթէ ըստ ներելոյ մարդկեղեն օրինակաց մարթ իցէ ասել, եթէ պիտոյ իցէ առ այդ լուցկի ինչ, դա ինքն կամեն իցէ, կամք հզոր:

Այլ է թե հոգւոյն և փեսուրք թեոցն յերկրի աստ՝ լաւութիւնքն կամ առաքելութիւնք:

Եթե արքայութիւն երկնից՝ է տեսութիւն Աստուծոյ, որպէս և է իսկ և տեսութեան առիթ և յորգոր՝ Արքութիւնն՝ ի Քրիստոսէ վկայեալ, ապա նոյն իսկ սրբութիւնն՝ արքայութիւն է յերկրի և առաջնորդ յերկինս:

Եւս և սրբութիւն իսկակիցք են:

Արքութիւնն լուսութեամբ իսկ քարոզէ:

Այնքան մեծ և անկէղւ և յարգ և արժէք միոյ և միոյ անձին յայն ամենաբաւականին և անկարօտ Աստուծոյ իմոյ, որպէս և է՞ և կէտս մի փոքրիկ և աննշմարելի՝ լուսնն լինէի նորին անբաւութեան:

Այնքան սիրէ դք որքան և նուիրէ:

Փափաքն և սէրն՝ մուտք արքայութեան:

Ընտանութիւն յաճախեալ՝ օտարութիւն է առ Աստուած, և անհնար է սրտի տարածելոյ առ մարդիկն՝ ամբոփել առ Աստուած:

Որպէս հօգր և պանչելի է հուր՝ ոչ այնքան ի ծախելն և ի սպառել, որքան յաճելն, ի ծաւալելն և յիւր տարրն փոխել կամ ընդ ինքեամբ՝ յոր միանգամ հպիցի, ըստ այսմ և հուր սրտին, սէոն, յոր օրինակեաց ինքն վառարան սիրոյն՝ յասելոս «Հուր եկի արկանել յերկիր», որով բորբոքեալ էր զերկնայինսն, զգաստ հրեշտակացն:

Որքան ծանիցէ [զԱստուած] այնքան և սիրեսցէ (բնութիւն արարածական) և որքան սիրեսցէ՝ այնքան և վերացի, մերձեսցի յԱստուած ի հաստիչ իւր:

Համախոհութիւն ի բարիս՝ յաճախէ զսէրն և զզօրութիւն. համակրութիւն՝ զգութն և զօգնութիւնն, որ է ողորմութիւն մեծ և կարեւոր:

Սիրով առաւել լինի յաշողութիւն՝ քան ծարարութեամբ հանձարոյ:

Մի ինչ արտաբերստ ի ներքս բերցուք, բայց և թէ չիւզ մի ձիթենայ, զհաշտութիւն անձին ընդ ընկերաց:

Որպէս կարեւոր են երկու ձեռք առ ի բառնալ զբռն մեծ, այսպէս և սատարութիւն առ մենեցուն առ ի բառնալ զհասարակացն բռն, որ այդու իսկ օրինակաւ՝ գործի փոքրոգի:

Բազում միութեանց [ընկերութեան իմիք և ի կրօնաւորական միաբանութեան] քակտումն են միոյն, նման թագաւորութեանց բաժանելոց ի միումն թագաւորութեան:

Հաւատք և յոյս առաջին տարերք են քրիստոնէութեան և սէր կարապետ նոցա և վերջապահ:

ԽՈՆԱՐԱՆՈՒԹԻՒՆ. — ՀԵՋՈՒԹԻՒՆ

[Խոնարանութիւն և սէր] յօղեալք և յեռեալք յերեար՝ չքնաղ մանեակ պարանոցի և զարդ լանջալ միանձին. կամ դարձեալ, խոնարանութիւն՝ յատակ կրօնաստեղի, սէր գմբէթն, զորս ընդ մէջ պարսպեն կանոնք:

Առ ձեզ են հրաւերքն երկնաւորք, երանութիւնքն և աւետիքն, ո՞վ խոնարհք և սուրբք սրտեք, ո՞վ զանխուլ սերողք և սերելիք Սիրելւոյն Յիսուսի, համարձակ են ձեզ քանապարհք վերին օթեանացն. Ելէք և վերացարուք:

Սիրտ առաքինի այնքան վերանայ՝ որքան յաւելու ի խոնարանութիւնն և ի սրբութիւն. և ոչ գիտեմ թէ արդարեւ ինչն վերանայ առ Աստուած, և թէ Աստուած խոնարհի առ ինչն:

Ձինչ առաւել արդարեւ քաղցր և հեշտալի սրտի հեղոյ և մաքրի՝ քան յաստուածայինսն խոկալ և խորամուկս լինել. ամենայն պատուիրանք Աստուծոյ և պարզք իւր՝ ըզձալիք թուին. ոչ հարկ՝ այլ կիրք. խրատն կատարելութեան՝ սովորական ասպարէզ է նորա՝ պատուէրն սրբութեան՝ հանապազօրեաց կրթութիւն. լուծ կրօնաւորութեան՝ մանեակ պարանոցի լծագրին. ուխտ կուսութեանն՝ տարփանք և գգնանք փեռային. հրաժեշտ անձին կամայ՝ աղատութիւն

անսահման. քահանայապետութիւնն՝ ոչ այն-
քան ընդ բարձրութիւն շնորհին զարհուրեցու-
ցանէ, որքան ընդ գութն և ընդ խոնարհութիւն
Քրիստոսի պանշացուցանէ. պատկերակցու-
թիւն Աստուծոյ ոչ ևս պակուցանէ, քանզի և
զԱստուած տեսանէ՝ մարմնով նմանեալ ինքեան.
սրբութիւնն որոց՝ ոչ ևս անմատոյց, քանզի
հաղորդութեամբ պատարագին Քրիստոսի խառ-
նի յաստուածութիւն անգր, յայն՝ որ «Աէր
է, և որ կայ ի սէրն՝ բնակեալ է Աստուած
և Աստուած ի նմա բնակէ (Ա. Յովհ. Գ. 1)»:

Հեղութիւն իցէ Հանգարտութիւն կրից նուա-
շելոց յանձին:

Հեղութիւն՝ հաշտ քաղաքավարութիւն ընդ
մարդկան:

Հեղութիւն ծաղիկ է խոնարհութեան, և աս
տունէ դրախտին Յիսուսի. զոր թէ կամիցիս
յանձին քու՞մ քննել որքան իցէ խորարմատ,
սեւս, եթէ զիմա՞դ վարիս ընդ ընկերաց:

(Ասէ զհեղութեան) Ո՛վ լծակ հրաշակերտ, որով
խոնարհին սիրտք վերամբարձք, և վերամբառ-
նան վայր իջեալքն գիտակցութեամբ տկարու-
թեան իւրեանց:

Հեղութիւն երեսաց և ժպիտ մի քաղցր՝ ոչ
սակաւ ազգէ և ուսուցանէ:

Հեղութիւն ճարտար բանալի է սրտից, ար-
տասուք՝ գունապան հոգւոց:

Հ Պ Ա Ր Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն ԲԱՐԱՅՈՒԹԻՒՆ

Ո՛վ ամբարտաւան բլուրք աշխարհի, ո՛վ լե-
րինք հպարտացեալք ի վերայ հարթութեան
երկրի. ո՛ւր արք իցէք և ո՛ւր երեսնջիք ի հնչել
հոգեզուարճ բարբառոցն՝ առ նորակերտ նա-
հասական, առ հեզս և խոնարհս, «Վերացիք,
եղէք՝ աստ»:

Սէր անձին և սեփական կարծեաց անձնա-
պաշտութիւն է. և պաշտոնք այդ՝ յայտնապէս
ինն անաստուածութիւն:

Որքան ի բարձուք ոք գծիցէ այնքան և ուժ-
գին տապաստ անկցի և խորտակեցի:

Բարկութեան չիք երբեք շահեալ զգը. թե-
րեւ նուաճէ, ընկճէ, յաղթահարէ, վարէ բռնի,
այլ ոչ ամոքէ. ընդ քարշ տանի իբրեւ գերի և
ստրուկ, և ոչ հաւան և հլու. կարկէ զբերան,
այլ ոչ զմիտս. արգելու զգործն, այլ ոչ զկամս
գործողին. նա և բազում անգամ՝ ոչ միայն
ոչ ինչ ստանէ զիմակցին, այլ անձամբ զանձն
վտանգէ. կամ որպէս ապառաժ ընդ ապառաժի
բաղիսեալ երկոքին ևս փշրին կամ անտեղիտա-
լիք միան:

Մտանեղոյն հաւածող՝ իւրաքանչիւր եւն է՝
հին ծնունդ. բնութեան տապկանելոյ. յոր չէ
մարթ արկանել կապերտ նոր, այլ նոր ստանալ
մորձ անկեալ պէսպէս շնորհք հոգւոյն:

ՔԱՆԱՆԱՅ ՔԱՆԱՆԱՅԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Ուր և իցեմք՝ ի վերայ աշտանակի կառու-
ցեալ եմք:

Յաշտանակի կառուցեալ կամ ի տան Տեառն,
առ ի տալոյ լոյս՝ որոց ի նմին և որոց յաշ-
խարհի, փայլիցեմ արեգք շնորհք, եթէ առ-
կայծեալ ծածանիմ, կամ որպէս երգեմս, «Նը-
բեմն էի լոյս, և այժմ եմ խաւար»:

Ձմանին իմ. յորդորեմ, զահ և զոյս
յաջմէ և յահեկէ ունելով և զսէրն առաջնորդ՝
մատչել [ի խորան առ ի պատարագել]:

Վառեցարժէք քահանայք, պաշտօնեայք նո-
րոյ ուխտիս, խոնարհութեամբ և զգաստու-
թեամբ, յուսով գթութեան Աստուծոյ և սի-
րով մարդասիրին Յիսուսի, որով միայնով մարթ
է ձեզ մտանել ի հուրն և անորոցակէլ ելանել.
նա և վառիլ և բորբոքիլ, այլ ոչ ծախիլ և
սպառիլ. և նայապէս վառել զոգիս հաւատա-
ցեւոյն ձեզ հօտի, և ջամբել նոցա զկենդարար
ճաշական:

(Քահանայք) Քարող կարգեցար, մի լռեր.

ճրագ կանգնեցար, շեր լուսատուր. բոխիչ հոգւոց, պատրաստ ունելով զհոգեկեցող զեղուրայդ՝ փութա՛մ գարման տանել. հրաւիրով եւ խաղաղութեան, տուր, սփռեալ զայն յառհասարակ եկեղեցիդ և ի գաստ ժողովրդեան:

Ոչ է մարմ արժանապէս զոհել զՅիսուս, եթէ ոչ և ընդ անձինս մեր անցեղ սուրն խորհրդագան:

Կատարելութիւն աստուածակերպ. այս պարտք և կնիք և լրութի որդեգրութեան է պաշտօնէից Աստուծոյ, միանձնաց և քահանայից:

(Պատարագն) ծայրագոյն կատարելութիւնն է դործոց ի վերայ երկրի.

Աւետարանի արքայութեան Աստուծոյ, հարկ է նախ... յառաջ իսկ քան զերբանն՝ բարբառեցին դէմքն, և յառաջ քան զլեզուն՝ քարոզեսցէ անձնն բովանդակ. կանխեսցէ օրիւնակն քան զբանն. և մինչև և պատգամաց ի նմանէ սփռեալ տարածեսցի համբաւն բարի. մինչև և կարկառեալ զճաշակն՝ բուրեցի հոտ անուշութեան:

ԱՂՕԹՔ. — ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ

Զիք ինչ հզօր, չիք ինչ վեհ, չիք ամենուհազ քան զձայն Աստուծոյ որ ի մխայրութեան հծծիցէ յունկն հոգեխոհի. և ոչ իրմարտն կատարունակ՝ քան զաղօթանոց մտախոհութեան, և ոչ համառօտ ճանապարհ՝ զգաստութեան:

Ի և Յիսուսի երբեք լուութիւն ոչ նուազ ազդոյ քան զբարբառ իւր. շատ է թէ մերձիցէ քեզ, և զու մանաւանդ մերձեցաւ առ Յիսուս, առ այն՝ որ և ի հեռանալդ քու՝ տակաւին որպէս զբարձագանգս ինչ զխորս գիտակցութեանդ հնչեցուցաներ:

[Զայնէ առ մտաւորական արժեքները.] Ո՛վ գեղեցիկ երախայրիք աստուծոյն, որ խոտանան զբարիք անագանն՝ երեկոյին. և երե-

կոյ բեղնաւոր՝ որ ծնանի զառաւստն հոգեկեանի:

Գիտութիւն աչք են մտաց և հոգւոյ. այլ աստուածատես լինին աչք՝ ի հիւծոյ աղօթից, և նովին սփռն զլլայ և ի կարօտեալն ի լուսոյ:

Աղօթից օժանդակութեամբ մարմ է օւսանել և գիտել բազում ինչ զոր և գիրք չբաւեն ուսուցանել:

Ողորմութիւն գիտէ բանալ ելի աղագս և յանկոխ և յանքոյս վայրի. քան զՆաբուքո-գոնոսոր չէր դք խտագոյն, և մարգարէն՝ առ կակղել նուաճել զսիրտն այն, «Զմեզս քո, ասէ, որդմութեամբ քաւեալիք, և զանօրէնութիւնս քո՝ գթովք անանկաց»:

Սրեալ են զէնք արգարութեան նորա. այլ պաշտպան կայ մեզ անթափանցելի վահան ուղորմութեանցն:

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

Մայր խաչեցելոյն, և խաչակից նմին աղեգք գթոյն, զօր դամ քան զգամ՝ սուր սրտին մուտցանէ, և սեր սրտին կեցուցանէ:

Սա (Ս. Կոյան առ օտս խաչին) անդիմակց հայեցուածով միոյ ակինն պաշտեալ է Կուսածին իւր՝ յանդուգական յորդիս մարդկան, և միով ակամբն՝ յայսմ ցաւագին պահու ծնեալքս առ ինքն, ձգէ զամենեւին յանձուկն յայն և ի սիրտ ասպարեզ՝ որ ընդ մէջ կողապատտ գեղարդանն և սրտախոց օխնոյնեան սրոյն. և ներքագոյնս ազգէ յոգիս. Դանդաղիցէ տակաւին եւ. արիք, օրդեակք ցաւոց, ելէք վերացարուք առ խաչակից ի փրկութիւն ձեր — Զինչ և Յիսուս՝ պարաւանդեալ ի մորմոքեցուցէ գիտակին. — Հայելով ի վեր, Հայր, Թող զոցա. և Հայելով ի վայր, Ահա մայր ձեր. Ահա որդիք քո իսկ զինչ և ես. բաւիցեմ ասել բայց թէ՛. Յիշեա և զիս տէր յարքայութեան

չաւար. Հ. Ղ. Տ.

(Թաքարկի և ի տպագրեալ հոգեւոր մարտից)